«Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամի
«Տալենտում» տաղանդների կրթական և զարգացման 2022/2023թթ. ծրագրի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ք. Երևան, ՀՀ «20» հոկտեմբեր, 2022թ.

Կողմերի պարտավորություններ

1. Հիմնադրամը պարտավոր է.

1.1. Կազմակերպել Կրթաթոշակառուների համար անվճար վարպետության դասեր Հայաստանում և/կամ արտերկրում:
1.2. Կազմակերպել Կրթաթոշակառուների համար անվճար օտար լեզուների բանավոր խոսքի զարգացման դասեր:
1.3. Կազմակերպել Կրթաթոշակառուների համար անվճար այցելություններ մշակութային հաստատություններ (թանգարան, պատկերասրահ):
1.4. Կազմակերպել Կրթաթոշակառուների մասնակցությամբ համերգներ և դրանց հետ կապված փորձեր:
1.5. Կազմակերպել Կրթաթոշակառուների մասնակցությամբ Հիմնադրամի և ծրագրի նպատակներից բխող այլ նախաձեռնություններ (սոցիալական ծրագրեր, հանդիպումներ, Flashmob-ներ/challenge-ներ սոցիալական հարթակներում և այլն):
1.6. Տրամադրել Կրթաթոշակառուներին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կազմակերպած բոլոր հայաստանյան համերգների հրավիրատոմսեր (2 անվճար տոմս յուրաքանչյուր կրթաթոշակառուին):
1.7. Տրամադրել Կրթաթոշակառուներին դրամական աջակցություն, որը ֆիքսվում է պայմանագրով:

1.8. Ուղարկել Կրթաթոշակառուի և/կամ Օրինական ներկայացուցչի էլ. փոստին Մասնագիտական խորհրդի անդամի եզրակացությունը՝ տրված Կրթաթոշակառուի եռամսյակային հաշվետվության և տեսաձայնագրության հիման վրա:

1.9. Հիմնադրամի որոշման հիման վրա՝ արտերկրում վարպետության դասի/համերգի մասնակցելու հնարավորություն տրամադրելու դեպքում հոգալ Կրթաթոշակառուի հետևյալ ծախսերը՝

1.9.1. Երկկողմ թռիչքի (մեկնում և վերադարձ) ավիատոմս (այդ թվում՝ երաժշտական գործիքի ավիատոմս, եթե այն տեղափոխելու համար անհրաժեշտ է լրացուցիչ տոմսի ձեռքբերում) Հիմնադրամի կողմից միանձնյա ընտրված ընկերության կողմից իրականացվող կանոնավոր կամ չարթերային թռիչքով և օդային տրանսպորտի դասով:

1.9.2. Արտերկրում Հիմնադրամի կողմից սահմանված ժամկետում և ընտրված վայրում կեցության արժեքը, Կրթաթոշակառուի սննդի ծախսերը՝ Հիմնադրամի կողմից միանձնյա որոշված դրամական միջոցների սահմաններում և վարպետության դասի արժեքը:

1.9.3.Հիմնադրամը վիզայի ստացման (եթե այդպիսին պահանջվում է) աջակցություն չի տրամադրում, դրա ստացման երաշխիք չի տալիս և չի փոխհատուցում չնշված այլ ծախսերը:

2. Կրթաթոշակառուն պարտավոր է.

2.1. Օգտագործել ստացած գումարային աջակցությունն ըստ Օրինական ներկայացուցչի կողմից նախապես պայմանագրի ստորագրման պահին նշված նպատակների:

2.2. Հետևել իր մասնագիտական առաջընթացին և ապահովել մասնագիտական աճ կրթաթոշակառու լինելու ամբողջ ընթացքում:

2.3. Պահպանել Հիմնադրամի նկատմամբ հաշվետվողականություն: Կրթաթոշակառուն և Օրինական ներկայացուցիչը հաշվետու են Հիմնադրամի առջև ստացված ֆինանսական աջակցության տնօրինման և օգտագործման նպատակայնությունը հիմնավորելու և մասնագիտական աճի առնչությամբ (կրթաթոշակի տնօրինման և օգտագործման ուղղությունների առնչությամբ Կողմերի միջև կնքվում է փաստաթուղթ):

2.3.1. Ֆինանսական աջակցության տրամադրման յուրաքանչյուր հաշվետու եռամսյակի համար Կրթաթոշակառուն և/կամ Օրինական ներկայացուցիչը մինչև տվյալ եռամսյակի վերջին աշխատանքային օրը Հիմնադրամի՝ «talentum@m4f.foundation» էլ. փոստի հասցեին ուղարկում է նոր կատարված տեսագրություն նոր ծրագրով առնվազն 5 րոպե տևողությամբ և լրացված հաշվետվություն՝ Մասնագիտական աճի վերաբերյալ եռամսյակային հաշվետվություն (ստորագրված Օրինական ներկայացուցչի կողմից, Pdf/Word ձևաչափով):

Եռամսյակային տեսաձայնագրության նկատմամբ պահանջներն են.

- ազատ ծրագիր (1 կամ մի քանի ստեղծագործություն), որը կրթաթոշակառուն պատրաստել է տվյալ եռամսյակի ընթացքում,
- ծրագիրը կարող է կատարվել անգիր և նոտաներով,
- կրթաթոշակառուն պետք է հանդես գա մենանվագ ստեղծագործության կատարումով (որպես մենակատար): Եթե ներկայացվող ստեղծագործությունը/ները կատարվում է/են նվագակցությամբ, ապա կրթաթոշակառուն պետք է ինքնուրույն ապահովի նվագակցություն,
- տեսաձայնագրությունը չպետք է լինի մոնտաժված և ձայնագրությունը չպետք է ենթարկված լինի մշակման,
- տեսաձայնագրությունը պետք է լինի բարձր որակով (նվազագույնը՝ HD 720p որակով), ստատիկ նկարահանված, և պետք է երևան մենակատարի գործիքն ամբողջությամբ (դաշնամուրի դեպքում՝ ստեղնաշարը), մենակատարի գլուխը, ձեռքերը և մատները,
- թույլատրվում է ներկայացնել նաև տանը կատարված տեսաձայնագրություն:

Կրթաթոշակառուի եռամսյակային տեսագրությունները տեղադրվում են Հիմնադրամի YouTube-յան էջում:

2.3.2.Ֆինանսական աջակցության տրամադրման հաշվետու ամսվա համար Կրթաթոշակառուն և/կամ Օրինական ներկայացուցիչը մինչև տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը Հիմնադրամի՝ «talentum@m4f.foundation» էլ. փոստի հասցեին ուղարկում է ֆինանսական աջակցության տնօրինման և օգտագործման մասին հաշվետվություն (ստորագրված Օրինական ներկայացուցչի կողմից, Pdf/Word/Jpg ձևաչափով), որի շրջանակներում կրթաթոշակի տնօրինման և օգտագործման ուղղությունները պետք է համընկնեն նախապես Հիմնադրամի կողմից սահմանված ծախսման ուղղությունների հետ:

2.4. Պարտաճանաչ մասնակցել և ներկայանալ.

2.4.1 Վարպետության դասերին

- Տվյալ մասնագիտության գծով կրթաթոշակառուները՝ որպես ակտիվ մասնակից:
- Այլ մասնագիտության գծով կրթաթոշակառուները՝ որպես պասիվ ունկնդիր (այս կետը պահպանելը պարտադիր է):

2.4.2. Օտար լեզուների բանավոր խոսքի զարգացման դասերին

- Օտար լեզուների բանավոր խոսքի զարգացման դասերին գրանցվելու դեպքում (գրանցումը խիստ ցանկալի է) Կրթաթոշակառուն պարտավոր է կանոնավոր ձևով, առանց անհարգելի բացակայությունների հաճախել դասընթացներին:

2.4.3.Մշակութային հաստատություններ այցելություններին (թանգարաններ, պատկերասրահներ)

2.4.4.Իրենց մասնակցությամբ համերգներին և փորձերին

- Համերգներին պատրաստվելու համար անհրաժեշտ է ներկա լինել նաև փորձերին՝ Հիմնադրամի նշած ժամանակացույցով:
- Համերգների ժամանակ Կրթաթոշակառուն ինքնուրույն պետք է ապահովի իր նվագակցությունը, եթե այդպիսին պահանջվում է:

2.4.5.Ծրագրի նպատակներից բխող բոլոր նախաձեռնություններին

2.4.6. Ներկայանալ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգներին, իսկ փորձերին՝ ըստ պահանջի:

- Կրթաթոշակառուն պետք է ներկա լինի համերգին դասական համերգին այցելելու հարիր հանդերձանքով և դրսևորի համապատասխան վարքագիծ:
- Կրթաթոշակառուն դահլիճում պետք է նստի ըստ հրավիրատոմսի իրեն հատկացված վայրում:
- Կրթաթոշակառուն պետք է համերգից հետո մոտենա ետնաբեմ, շնորհավորի դիրիժորին և սոլիստին:
- Կրթաթոշակառուն պետք է ներկա լինի համերգին մինչև ավարտ:

2.4.7.Ցուցաբերել ակտիվություն սոցիալական հարթակներում՝ կիրառելով «#/@M4FF», «#/@Talentum», «#/@TalentsofArmenia», «#/@Music4Future», «#/@M4FFoundation» հեշթեգերը (կիսվել իր ձեռքբերումներով, մասնագիտական ունակություններով, տեղադրել իր մասնակցած վարպետության դասերին, համերգներին, միջոցառումներին, նախաձեռնություններին առնչվող և/կամ իր գրանցած հաջողություններին առնչվող լուսանկարներ, տեսանյութեր, այլ տեղեկատվություն, կազմակերպել/մասնակցել մարտահրավերներ («challenge») և այլն՝ նշելով (tag անելով) Հիմնադրամի սոցցանցերի էջերը):

2.5. Ունենալ ռուսերենի կամ անգլերենի (կախված վարպետության դասի անցկացման լեզվից) իմացության այնպիսի մակարդակ, որի պարագայում հնարավոր կլինի հաղորդակցությունը և ըմբռնելիությունը վարպետության դասի ընթացքում:

2.6. Տեղեկացնել Հիմնադրամին իր մասնակցությամբ բոլոր այլ ծրագրերում ընդգրկված լինելու մասին, ինչպես նաև համերգների, դասերի կամ այլ նախաձեռնությունների և դրանց ժամկետների մասին, որոնք կարող են այս կամ այն ձևով խոչընդոտել Հիմնադրամի շրջանակներում Կրթաթոշակառուի գործունեությանը:

2.7. Ժամանակին պատասխանել իրենց ուղղված նամակներին՝ առանց Հիմնադրամի կողմից հիշեցումներ ուղարկելու, հակառակ դեպքում Հիմնադրամն իրավունք ունի չառաջնորդվել Կրթաթոշակառուի և/կամ նրա Օրինական ներկայացուցչի ցանկությամբ՝ տվյալ նամակով պահանջվող գործողությունների առնչությամբ:

2.8. Տեղեկացնել Հիմնադրամին երկրից բացակայությունների մասին, եթե այդպիսիք կան՝ Հիմնադրամի «talentum@m4f.foundation» էլ. փոստի հասցեին գրավոր նամակի տեսքով:

2.9. Պարտադիր վկայակոչել բոլոր հանրային հրապարակումներում (կենսագրություն, ԶԼՄ-ների հարցազրույցներ, հոդվածներ և այլն) «Տալենտում» կրթական և զարգացման ծրագրի

կրթաթոշակառու լինելու փաստը Օրինական ներկայացուցչի հետ կնքվելիք պայմանագիրը ստորագրելու պահից առնվազն հինգ տարի շարունակ:

2.10. Ուղարկել Հիմնադրամի «talentum@m4f.foundation» էլ. փոստի հասցեին Կրթաթոշակառուի նշանակալի ձեռքբերումները՝ մրցանակները, դիպլոմները՝ Հիմնադրամի կայքում և սոցիալական ցանցերի պաշտոնական էջերում տեղադրելու համար:

2.11. Ներկայացնել Հիմնադրամին իր և/կամ Օրինական ներկայացուցչի անձնական տվյալների (օրինակ՝ դպրոց, հասցե, հաշվեհամար և այլն) փոփոխության մասին տեղեկություններ:

2.12. Արտերկրում վարպետության դասերի մասնակցելու պարագայում՝

- Ինքնուրույն ապահովել ելքի արտոնագրի և վիզայի առկայություն (եթե այդպիսին պահանջվում է):
- Վերադառնալ ՀՀ արտերկրում վարպետության դասի/համերգի մասնակցելուց հետո:
- Փոխհատուցել Հիմնադրամի կողմից կատարված ծախսերը, եթե Կրթաթոշակառուն (նրա Օրինական ներկայացուցիչը) հրաժարվում են արտերկիր մեկնել՝ Հիմնադրամի պաշտոնական էլ. փոստին արդեն իսկ ուղարկված հաստատումից հետո: (Բացառություն է կազմում մասնակցությունից հրաժարվելը ֆորս մաժորային իրավիճակի առկայության հիմքով՝ համապատասխան հիմնավոր փաստաթղթեր ներկայացնելու դեպքում):

2.13. Պահպանել էթիկայի և վարքագծի նորմերը, որոնք ներկայացվում են Կրթաթոշակառուին (Օրինական ներկայացուցչին) պայմանագրի կնքման հետ մեկտեղ:

3. Հիմնադրամն իրավունք ունի.

3.1. Կայացնել որոշում Կրթաթոշակառուին ֆինանսական աջակցության ստացման հնարավորությունից զրկելու մասին, ինչպես նաև խզել պայմանագիրը, եթե.

- ամսական և եռամսյակային հաշվետվությունները չեն ուղարկվում Հիմնադրամին սահմանված ժամկետներում կամ լրացվում են սխալ,
- ֆինանսական աջակցությունը չի օգտագործվել նպատակային նշանակությամբ՝ ելնելով Օրինական ներկայացուցչի կողմից ներկայացված՝ ֆինանսական աջակցության տնօրինման և օգտագործման մասին ամսական հաշվետվությունից և պայմանագրի կնքման պահին այն ծախսելու համար ներկայացված ուղղություններից,
- եռամսյակային հաշվետվության տեսագրության հիման վրա ակնառու է դառնում Կրթաթոշակառուի պրոֆեսիոնալ մակարդակի նվազում կամ Կրթաթոշակառուն չի զարգանում, և Մասնագիտական խորհուրդը, ներկայացրած եռամսյակային տեսագրության հիման վրա ներկայացնում է բացասական եզրակացություն Կրթաթոշակառուի մասնագիտական աճի մասին,
- կրթաթոշակի ստացման ժամանակահատվածում Կրթաթոշակառուն դադարեցնում է իր ուսումը երաժշտական հաստատությունում կամ հեռացվում է երաժշտական հաստատությունից և դադարեցնում է իր հետագա երաժշտական կրթությունը, տվյալ

տարվա ընթացքում փոխում է իր մասնագիտությունը, չի շարունակում իր կրթությունը այն մասնագիտությամբ, որով դիմել էր ծրագրին, զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության,

- կրթաթոշակառուն դադարում է ՀՀ քաղաքացի լինելուց և/կամ նրա փաստացի բնակության վայրը տեղափոխվում է ՀՀ-ից դուրս,
- կրթաթոշակի տրամադրման ժամանակահատվածում բացահայտվում են անհամապատասխանություններ, տրամադրված կեղծ կամ ոչ ճիշտ տեղեկատվություն, որն առնչվում է Կրթաթոշակառուին,
- կրթաթոշակառուն և/կամ Օրինական ներկայացուցիչը ցուցաբերում են ոչ էթիկական պահվածք և վարվելակերպ:

3.2. Սույն կանոնակարգում նշված 2.4.1., 2.4.2., 2.4.3., 2.4.4., 2.4.5., 2.4.6., 2.4.7. կետերով նախատեսված նախաձեռնություններին չմասնակցելու դեպքում անհրաժեշտ է Կրթաթոշակառուի Օրինական ներկայացուցչի կողմից Հիմնադրամի «talentum@m4f.foundation» էլ. փոստի հասցեին ներկայացնել հիմնավոր գրավոր պատճառ և փաստաթուղթ (օրինակ՝ հիվանդության դեպքում՝ բժշկի կողմից տրամադրված տեղեկանք): Ոչ պարտաճանաչ հաճախումներ և գրավոր ձևով չհիմնավորված բացակայություններ ունենալու դեպքում Հիմնադրամն իրավունք ունի զրկել կրթաթոշակառուին ֆինանսական աջակցությունից, իսկ կրթաթոշակառու լինելու երեք ամսվա ընթացքում ոչ պարտաճանաչ հաճախումների և գրավոր ձևով չհիմնավորված բացակայությունների դեպքում՝ նաև դադարեցնել Կրթաթոշակառուի Օրինական ներկայացուցչի հետ պայմանագիրը և համագործակցությունը Կրթաթոշակառուի հետ:

3.3. Պահանջել տեղեկանք Կրթաթոշակառուի երաժշտական հաստատությունից վերջինիս՝ սան հանդիսանալու վերաբերյալ, և/կամ լրացուցիչ այլ տեղեկատվություն:

3.4. Պահանջել Կրթաթոշակառուից և/կամ Օրինական ներկայացուցչից վերջիններիս անձնական տվյալների հնարավոր փոփոխությունների մասին տեղեկություններ:

3.5. Մշակել Կրթաթոշակառուի և/կամ Օրինական ներկայացուցչի տրամադրած տեղեկատվությունը և անձնական տվյալները: Կրթաթոշակառուն և Օրինական ներկայացուցիչը սույնով տրամադրում են իրենց համաձայնությունը անձնական տվյալների մշակման համար:

3.6. Օգտագործել և տարածել սույն Կանոնակարգի, կնքվելիք պայմանագրի, դրա ցանկացած դրույթի իրացման շրջանակներում և/կամ առնչությամբ Կրթաթոշակառուի և/կամ Օրինական ներկայացուցչի մասնակցությամբ կատարված լուսանկարները, աուդիո նյութերը և տեսանյութերը, այլ ռեսուրսները, ինչպես նաև սոցիալական հարթակներում տեղադրված և Կրթաթոշակառուի մասնագիտական գործունեությանը վերաբերող ցանկացած ռեսուրս:

3.7. Իրականացնել վերահսկողություն տրամադրած ֆինանսական աջակցության՝ ըստ նպատակային նշանակության տնօրինման և օգտագործման նկատմամբ:

3.8. Այն դեպքում, եթե Կրթաթոշակառուն ինքն է առաջարկում Հիմնադրամին վարպետության դասերի իր մասնակցությունը, այսինքն՝ վերջինիս առաջադիմության հիման

վրա Հիմնադրամի միանձնյա որոշմամբ նման առաջարկ չի ներկայացվում, Հիմնադրամը իրավունք ունի վճարել ծախսերը մասնակիորեն կամ հրաժարվել ֆինանսավորումից:
3.9. Պահանջել արտերկրում վարպետության դասի մասնակցելիս Հիմնադրամի կողմից կատարված ծախսերի փոխհատուցում, եթե Կրթաթոշակառուն (Օրինական ներկայացուցիչը) հրաժարվում են արտերկիր մեկնելու՝ Հիմնադրամի պաշտոնական էլ. փոստին արդեն իսկ ուղարկված հաստատումից հետո:
3.10. Սույն Կանոնակարգով, կնքվելիք պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

4. Կրթաթոշակառուն իրավունք ունի.
4.1. Հրաժարվել Ծրագրին իր մասնակցությունից և հետևաբար՝ ֆինանսական աջակցության ստացման իր իրավունքից՝ նախապես պարզաբանելով պատճառը՝ գրավոր ձևով Հիմնադրամի «talentum@m4f.foundation» էլ. փոստի հասցեին ուղարկված պարզաբանման տեսքով:
4.2. Սույն Կանոնակարգով, կնքվելիք պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ: